

ԳԱՌԱՐՇԻՇԻ ԶՈՐԱՔԱՆԱԿԻ ՆԱՀԱՆՋԻ ԵՐԹՈՒՂԻՆ

Ս. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Մ. թ. ա. 522—520 թթ. Աքեմենյան աշխարհակալությունը կործանման եզրին էր կանգնած: Կեղծ Բարդիայի (Գաուստա մոգ) սպանությունից հետո հին պարսկական «արքայից արքա»-ների դահլիճ տիրացել էր Աքեմենյան տոհմի կրտսեր ճյուղի ներկայացուցիչ Դարեհ Ա Վշտասպորպին (մ. թ. ա. 522—486 թթ.): Մինչ Դարեհը կամրապնդեր իր զահը, Իրանում ստեղծված խառնակ վիճակից օգտվելով, մի շարք երկրներ դուրս էին եկել Աքեմենյանների հպատակությունից և ապստամբության դրոշ պարզել: Ապստամբ երկրների թվում էր և Հայաստանը: Աքեմենյանների դեմ ընդվզած հայերին ճնշելու համար ուղարկված պարսից զորաբանակները ստիպված են եղել մի քանի ամիսների ընթացքում մղելու հինգ ճակատամարտ՝ երկուսը պարսիկ զորավար Վահուստասպի, իսկ երեքը՝ հայ զորավար Դադարշիշի հրամանատարությամբ:

Իր զահն ամրապնդելուց հետո Դարեհ I-ը հրամայել էր այժմյան Փերմանյահից արևելք գտնվող Բեհիստուն կամ Բիսեթուն (պարս. *بیس‌تون*, հին իրան. *Bagasiāna*, հին հուն. *Βαγιάστανον* *ōpō-*) կոչված ժայռի վրա փորագրել Լուսեզվյան՝ հին պարսկերեն, էլամերեն, աշտերեն (բաբելերեն) մի մեծածավալ արձանագրություն, որը պատմում է տարբեր երկրների ապստամբների դեմ Դարեհի զորաբանակների տարած (երբեմն խիստ կասկածելի) հաղթանակների մասին: Ըստ արձանագրության, ապստամբ հայերի և Դարեհի հղած զորաբանակների միջև ճակատամարտեր մղվել են հետևյալ վայրերում և հետևյալ հերթականությամբ. Ասորեստան - Ասորիքի Իդալա նահանգում (Վահուստաս)՝ 522 թ. դեկտեմբերի 31-ին, Հայաստանի Զուլա ավանի մոտ (Դադարշիշ)՝ 521 թ. մայիսի 21-ին, Հայաստանի Տիգրա ամրոցի մոտ (Դադարշիշ)՝ 521 թ. մայիսի 31-ին, Հայաստանի Ուլամա ամրոցի մոտ (Դադարշիշ)՝ 521 թ. հունիսի 21-ին, Հայաստանի Աուտիյարա նահանգում (Վահուստաս)՝ 521 թ. հունիսի վերջին²: Արձանագրության II սյունակի § 21-ում, որտեղ բերված էին ապստամբ երկրների անունները, Հայաստանի (հին պարս. *Armīna*) փոխարեն հիշատակված է *Adurā-* և *Սա*, հավանաբար, պետք է բացատրել նրանով, որ հայ ապստամբների և պարսից զորաբանակների միջև մղված ճակատամարտերից առաջինը տեղի է ունեցել ոչ թե Հայաստանում, այլ Ասորեստան - Ասորիքի հյուսիսային Իդալա նահանգում³: Ամենայն հավանականությամբ, նույնպիսի մի պատճառով ցանկում Արաքոսիայի (հին պարս. *Harahvati*, հին հուն. *Ἄραχωσία*) փոխարեն հիշատակվում է Սատագիգիան (հին պարս. *Šatagusa*, հին հուն. *Σαταγούσα*), երբ ապստամբ-

¹ Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հ. Ա, Երևան, 1944, էջ 48—50: Նույնի՝ Որտե՞ղ էր գտնվում Դարեհ Ա-ի դեմ ապստամբած Արմինան. «Պատմա-աշխարհագրական մանր հետազոտություններ», Երևան, 1945, էջ 3—4: Գ. Մ. Նալբանդյան. Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը. Երևան, 1964, էջ 14: Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, Երևան, 1971, էջ 447—448: М. А. Дандамаев. Иран при первых Ахеменидах (VI в. до н. э.). М., 1963, с. 270—272 (մնացյալ գրականությունը տե՛ս ստորև):

² F. W. König. Relief und Inschrift des Königs Dareios I am Felsen von Bagistan. Leiden, 1938, S. 43—51. М. А. Дандамаев. Указ. соч. с. 271—272.

³ Հայաստանի անվան բացակայությունը ապստամբ երկրների ցուցակում, այսպիսով, հիսթորիկ կարող ծառայել մեր ապստամբներին օտարածին տարր համարող (տե՛ս В. В. Струве. Этюды по истории Северного Причерноморья, Кавказа и Средней Азии. Л., 1968, с. 10), կամ Հայաստանը Մարաստանի կազմում տեսնող (տե՛ս F. W. König. Der falsche Bardija, Dareios der Grosse und die Lügenkönige. Wien, 1938, S. 136) ենթադրությունների համար:

ների դեմ պարսից զորքերի ծավալած ռազմական գործողությունների նկարագրության մեջ վերջինիս փոխարեն խոսվում է միայն Արաքոսիայի մասին:

Բեհիստունի արձանագրության II սյունակում (և I—III սյունակներում առհասարակ), որտեղ նկարագրվում են ապստամբ հայերի և պարսկական զորաբանակների միջև մղված ճակատամարտերը, դեպքերը շարադրված են ոչ թե ըստ ժամանակագրության, այլ ապստամբ երկրների աշխարհագրական դիրքով պայմանավորված հերթականությամբ՝ համապատասխանելով այն հերթականությանը, որով այդ երկրները թվարկված են արձանագրության § 21-ում: Ըստ այսմ, կասկածի տակ է առնվել այն ենթադրությունը, թե Դադարշիլն ու Վահումիսան հայ ապստամբների դեմ կռվել են հաջորդաբար՝ նախ առաջինը, ապա՝ երկրորդը: Ինչպես Գ. Ա. Տիրացյանն է գրում, «ժամանակագրական նոր մեկնաբանության համաձայն, ոչ թե Դադարշիլն է սկսում ապստամբության ճնշման գործը, իսկ Վահումիսան այն ավարտում է, այլ երկու զորավարները իրարից անկախ են վարում պատերազմական գործողությունները Հայաստանի տերիտորիայում, տարբեր ուղղություններով, մեկը Ասորիից, մյուսը Ասորեստանից կամ Մասսամեդից»:

Անտարակոյս, հարցի մեջ հստակություն կարող էր մտցնել այն վայրերի գոնե մոտավոր տեղագրությունը, որտեղ ճակատել էին պարսկական զորաբանակներն ու հայ ապստամբները: Առ այսօր եզրակացություն արձանագրությունում հանդիպող տեղանունների տեղադրումը հաստատուն չէ: Վահումիսայի բանակը իր գործողություններն սկսելով Ասորիքից, խորացել է Հայաստանի տերիտորիան, ըստ Էրևույթին, շարժվելով դեպի Աղձնիք: Ինչ վերաբերում է Դադարշիլ գետավազի գործազայրությունների ռազմաբնույթին, ապա այդ հարցը դեռևս անորոշ է մնում: Այս անորոշության ակունքները, մեր խորին համոզմամբ, գալիս են ժամանակին հայագիտության մեջ իշխած այն թյուր կարծիքից, ըստ որի՝ «Արմենիան» չէր ծածկանակ դեռ Արածանիի ստորին հովիտն ու նիփրատի արևելյան մասերն էին զբաղված, գեո չէին անցել Բարձրավանդակի (Հայկական լեռնաշխարհի—Ս. Պ.) արևելյան մասերը, Արաքսի և Վանա լճի արևելյան ավազանները: Դրանից ելնելով, արևելագետներն ու հայագետները Դարեհի զորաբանակների դեմ հայ ապստամբների Հայաստանում մղած ճակատամարտերի վայրերը փնտրում էին Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան և հարավ-լճին մասերում՝ հիմնականում հետագա Մեծ Հայքի Աղձնիք ու Կորճաք նահանգներում: Նաև Վ. Մ. VI դարի «...Հայաստանը մի փոքր միավոր չէր, որն իր մեջ ընդգրկեր միայն Աղձնիք ու Կորճաք նահանգները և նրանց հարևան շրջանները, ինչպես կարծում էին Լեոն ու Հ. Նանանդյանը, այլ մի ընդարձակ երկիր, որը կարող էր համարվել Ուրարտուի ներքին երկրից է, որ կազմվեցին աքեմենյան 13-րդ և 18-րդ դարապետությունները»:

⁴ Beh., III, 45—48.

⁵ М. А. Дандамаев. Указ. соч., с. 63.

⁶ Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, էջ 450 (ընդգծումները մերն են—Ս. Պ.): Տե՛ս նաև История армянского народа с древнейших времен до наших дней. Ереван, 1980, с. 31. Հայկական սովետական հանրագիտարան. հ. 2, Երևան, 1976, էջ 198: Նույն մտքին են փաստորեն հակված նաև Մ. Ա. Դանդամյանն ու Վ. Գ. Լուկոնինը (М. А. Дандамаев, В. Г. Луконин. Культура и экономика древнего Ирана. М., 1980, с. 106):

⁷ Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, էջ 450 (ընդգծումները մերն են—Ս. Պ.):

⁸ Հայկական լեռնաշխարհի մեզ հայտնի մի շարք ցեղերից միայն արմեններն էին, որ այն ժամանակվա հայագետների կողմից համարվում էին հետագա հայերի ուղղակի նախնիները:

⁹ Լեոն. Երկերի ժողովածու. հ. 1, Երևան, 1966, էջ 255:

¹⁰ Կ. Բասմաչյան. Դարեհի արշավանքն ի Հայս. «Բանասեր», Փարիզ, 1899, № 1, էջ 29—30; F. Justi. Geschichte Irans.—Grundriss der Iranischen Philologie. II. 5. Strassburg, 1903, S. 429. Լեոն. նշվ. աշխ., էջ 255: Г. Халатьянц. Очерк истории древней Армении. М., 1910, с. 86—89. Հ. Մանուկյան. Որտե՞ղ էր դրսևում Դարեհ Ա.—ի դեմ ապստամբած Արմինյան, էջ 4—9:

¹¹ Գ. Ա. Տիրացյան. Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դար). «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 4, էջ 95: Տե՛ս նաև Հ. Ժամկոչյան. Հայաստանը նախնադարյան-համայնական հասարակության և ստրկատիրության շրջանում. Հայ ժողովրդի պատմություն. պրակ 1, Երևան, 1961, էջ 143—144: Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, էջ 450:

Տարակույս լինել չի կարող, որ հայոց առաջին մեծ ապստամբությունից (մ. թ. ա. 522—521 թթ.) հետո էր նախկին միասնական Հայաստանը շաժանվել երկու առանձին մասերի. հարավ-արևմտյան Հայաստանի՝ 13-րդ սատրապություն, և հյուսիս-արևելյան Հայաստանի՝ 18-րդ սատրապություն¹²։ Այսպիսի բաժանման համար, ըստ երևույթին, հիմք էր ընդունվել նախկին միասնական Հայաստանի ներսում հյուսիս-արևելյան վարչական միավորի գոյության փաստը։ Վերջինս պետք է ամփոփեր Հայկական Պարից հյուսիս և արևելք ընկած այն շրջանները¹³, որոնք կազմում էին ուրարտական թագավորների կողմից ժամանակին նվաճված էթիոնի¹⁴ և Ունդուրի-էթիոնի¹⁵ ցեղամիությունների տարածքները (համտ. ավելի ուշ 13-րդ սատրապության՝ Քսենոփոնի «Արմենիա»-ի կազմում «Արևմտյան Արմենիա»¹⁶ վարչական միավորի գոյությունը)։ Եթե այսպես է, ապա հյուսիս-արևելյան վարչական միավորը ունենալու էր իր առանձին կառավարիչը՝ իրեն ենթակա զորամիավորումով։ Այս դեպքում հավանական է, որ Վահուստիայի զորաբանակը Դարեհն ուղարկել էր հարավ-արևմտյան Հայաստանի (հետագա 13-րդ սատրապության), իսկ Դադարչի զորաբանակը՝ հյուսիս-արևելյան Հայաստանի (հետագա 18-րդ սատրապության հիմնական մասի) ապստամբների դեմ։ Ընդ որում, Դադարչի զորաբանակը հյուսիս-արևելյան Հայաստան կարող էր մտնել միայն Մարաստանի (ավելի ճիշտ հետագա Ատրպատական-Մարաստանի՝ Փոքր Մարաստանի) վրայով։

Վերոշարադրյալը թույլ է տալիս նոր դիրքերից մոտենալու Դադարչի զորաբանակի և ապստամբ հայերի միջև տեղի ունեցած երեք ճակատամարտերի վայրերի տեղագրության հարցին։ Դրանց վերանայումն ու ճշգրտումը, ինչպես կտեսնենք ստորև, հնարավորություն կտա ոչ միայն պնդելու, որ Դարեհի կողմից ուղարկված երկու զորաբանակները Հայաստան էին ներխուժել տարբեր ուղղություններով, այլև պարզելու հայ ապստամբների հարվածների տակ նահանջած Դադարչի զորաբանակի երթուղին։ Ինչպես ասվեց, Վահուստիայի զորաբանակի հարձակման համար քիչ թե շատ հաստատուն կերպով ընդունվում է Ասորիք—Աղձնիք երթուղին։ Դադարչի զորաբանակի համար, փաստորեն, որևէ երթուղի չի ուրվագծվել, որովհետև այդ զորաբանակը Հայաստան կարող էր թափանցել ինչպես Ասորեստանի, այնպես էլ Մարաստանի կողմից։ Դադարչի զորաբանակի շարժման Մարաստան—Հայոց Միջնաշխարհ ուղղությունը մեղ ավելի հավանական է թվում, որովհետև համընկնում է դարեր շարունակ բանուկ եղած այն երթուղուն, որով ավելի ուշ հյուսիսային Ատրպատականից Հայաստան էին

Մ. Իսրայելյան. Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն. Երևան, 1971, էջ 108։ Ս. Ս. Երեմյան. «Արեմենյան պետությունը (ըստ հազաստանային արձանագրության, մ. թ. ա. 520—519 թթ.)» քարտեզը. Հայկական սովետական հանրագիտարան. հ. 2, էջ 163։

¹² Herod., III, 93 և 94. Հերոդոտի հաղորդումների համար, ինչպես կարծում են, հիմք է ծառայել Հեկատայոս Միլետացու (մ. թ. ա. 546—480 թթ.) կազմած Արեմենյան աշխարհակալության մեջ մտած երկրների և ժողովուրդների ցուցակը (M. A. Дандамаев. Указ. соч., с. 137)։

¹³ Տե՛ս Ս. Ս. Երեմյան. «Հայաստանը և Փոքր Ասիան ըստ Քսենոփոնի «Անաբասիսի» քարտեզը. Քսենոփոն. Անաբասիս. Երևան, 1970, էջ 240—241։ Գ. Ա. Տիրացյան. Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դ. վերջ—մ. թ. ա. III դ. վերջ). «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 2, էջ 68—74։ Ս. Գ. Պետրոսյան. Հին թրակյան էթնիկական տարրը հնագույն Վանանդում. ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1977, № 8, էջ 35, ծան. 20։

¹⁴ Համընկնում է հին հայկական ավանդազրույցներում ուրվագծվող «Շարայի ցեղամիություն» տարածքին։ Տե՛ս Ս. Գ. Պետրոսյան. «Շարայի ցեղամիությունը» Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (մ. թ. ա. VI—V դդ.). ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1979, № 12, էջ 65—76։ Նույնի՝ Հացադգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում. «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 3, էջ 187—204։

¹⁵ Համընկնում է նույն ավանդազրույցներում ուրվագծվող «Գեղամի ցեղամիություն» տարածքին։ Տե՛ս Ս. Գ. Պետրոսյան. Մերձսևանյան ցեղերի միությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (մ. թ. ա. VI—V դդ.). «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 1, էջ 187—198։

¹⁶ Xen., Anab., IV, IV, 4.

ներխուժում սասանյան և արաբական բանակները, սելջուկ, մոնղոլ, թուրքմեն ու զրզըլբաշ հրոսակախմբերը¹⁷։

Նախքան վերոհիշյալ երեք ճակատամարտերի վայրերի տեղագրությանը և Դադարշիմի զորքանակի հարձակման ու նահանջի երթուղիների պարզաբանման անցնելը, ժամանակագրական հաջորդականությամբ բերենք Բեհիստունի արձանագրության հին պարսկերեն տեքստի այն մասերը, որոնք վերաբերում են պարսկական զորքանակների և հայ ապստամբների ընդհարումներին։

1) Թատիյ Դարայավաւ՝ xšayaθiia. Pasāva Vaumisa nama Pārsa manā badaka avam adam fraiṣayam Arminam. Avaθāšaiy aṭaham: „paraidiy! kārā hya hamičiya manā naiy gaubataiy avam jadiy“. Pasāva Vaumisa aṣiyava. Yaθā Arminam pararasa pasāva hamičiya hagmatā paraita patiš Vaumisam hamaranam cartanaiy. Izala nama dahyauš Aθuraya avadā hamaranam akunava. Auramazdamaīy upastām abara. Vašna Auramazdāha kara hya mana avam karam tyam hamičiyam aja vasiy. Anāmakahya mahya XV raucabis θakatā āha avaθasam hamaranam kartam.

Ասում է Դարեհ թագավորը։ Հետո Վահումիսա անունով պարսիկ իմ ծառային եւ հղեցի Հայաստան։ Այսպես ասացի. «Գնա, զորքը որ ապստամբ է [և] ինձ ոչ է ասում, ջախջախիր»։ Հետո Վահումիսան գնաց։ Երբ [նա] Հայաստան մտավ, հետո ապստամբները հավաքվեցին [և] գնացին Վահումիսայի դեմ՝ կռիվ անելու։ Իզալա անվամբ նահանգ [կա] Ասորեստանում. այնտեղ կռիվ արեցին։ Ահուրամազդան ինձ օգնություն բերեց։ Ահուրամազդայի շնորհիվ բանակը, որ իմն էր, այն բանակից, որն ապստամբ էր՝ շատ [մարդ] սպանեց։ Անամակա մասի 12-ոք օրն էր այն ժամանակ, երբ կռիվ արեցին»¹⁸։

2) Թատիյ Դարայավաւ՝ xšayaθiia. Dadaršis nama Arminiya mana badaka avam adam fraiṣayam Arminam Avaθasaiy aṭaham: „Paraidiy! kara hya hamičiya mana naiy gaubataiy avam jadiy“. Pasava Dadaršis aṣiyava. Yaθā Arminam pararasa pasava hamičiya hagmatā paraita patiš Dadaršim hamaranam cartanaiy. Zūzahya nama avahanam Arminiyaīy avadā hamaranam akunava. Auramazdamaīy upastām abara. Vašna Auramazdāha kara hya mana avam karam tyam hamičiyam aja vasiy. Өuravaharahya mahya VIII raucabis θakatā āha avaθasām hamaranam kartam.

Ասում է Դարեհ թագավորը։ Դադարշիմ անունով արմինիյա իմ ծառային եւ հղեցի Հայաստան։ Այսպես ասացի. «Գնա, զորքը, որն ապստամբ է [և] ինձ ոչ է ասում, ջախջախիր»։ Հետո Դադարշիմը գնաց։ Երբ [նա] Հայաստան մտավ, հետո ապստամբները հավաքվեցին [և] գնացին Դադարշիմի դեմ՝ կռիվ անելու։ Զուզա (հյա) անվամբ բնակավայր [կա] Հայաստանում. այնտեղ կռիվ արեցին։ Ահուրամազդան ինձ օգնություն բերեց։ Ահուրամազդայի շնորհիվ բանակը, որ իմն էր, այն բանակից, որն ապստամբ էր՝ շատ [մարդ] սպանեց։ Թուրավահարա մասի 8-ոք օրն էր այն ժամանակ, երբ կռիվ արեցին»¹⁹։

3) Թատիյ Դարայավաւ՝ xšayaθiia. Patiy duvitiyam hamičiya hagmata paraita patiš Dādaršim hamaranam cartanaiy. Tigra nama didā Arminiyaīy avadā hamaranam akunava. Auramazdamaīy upastām abara. Vašna Auramazdāha kārā hya mana avam karam tyam hamičiyam aja vasiy. Өuravaharahya mahya XVIII raucabiš θakatā āha avaθasām hamaranam kartam.

Ասում է Դարեհ թագավորը։ Երկրորդ անգամ ապստամբները հավաքվեցին [և] գնացին Դադարշիմի դեմ՝ կռիվ անելու։ Տիգրա անվամբ ամրոց [կա] Հայաստանում. այնտեղ կռիվ արեցին։ Ահուրամազդան ինձ օգնություն բերեց։ Ահուրամազդայի շնորհիվ բանակը, որ իմն

¹⁷ Կենտրոնական Իրանից հյուսիս-արևելյան Հայաստան բերող այդ ճանապարհի վերաբերյալ տե՛ս Персидский дорожник, или указатель главных дорог в Персии.—«Кавказский календарь на 1857 год». Тифлис, 1856, с. 190—191; Карта Персии, северной части, с показанием главных дорог.—«Кавказский календарь на 1897 год». Тифлис, 1896, с. 38—39.

¹⁸ Beh., II, 29, 49—57 (տե՛ս Old Persian, Grammar, texts, lexicon, by Roland G. Kent, Second Edition Revised. American oriental society, New Haven, Connecticut, 1953, p. 121—122).

¹⁹ Նույն տեղում, 26, 29—37 (տե՛ս նույնը)։

էր, այն բանակից, որն ապստամբ էր՝ շատ [մարդ] սպանեց: Թուրավահարա ամսի 18-րդ օրն էր այն ժամանակ, երբ կոիվ արեցին»²⁰:

4) Թալիյ Դարայավաւ՝ xšayaθiya. Patiy cūliyam hamiciya hagmatā paraita patiš Da-daršim hamaranam cartanaīy. Uyama nama dida Arminiyaīy avada hamaranam akunava. Auramazdamaly upastām abara. Vāsna Auramazdaha kara hya mana avam karam tyam hamiciyam aja vasiy. Թaigarcaiš mahya IX raucabiš θakata aha avaθasam hamaranam kartam. Pasava Dadarsis cita mān amanaya Arminiyaīy yata adam arasam Madam.

«Ասում է Դարեհ թագավորը: Երրորդ անգամ ապստամբները հավաքվեցին [և] դնացին Դադարչիշի դեմ՝ կոիվ անելու: Ուլամա անվամբ ամրոց [կա] Հայաստանում. այնտեղ կոիվ արեցին: Ահուրամազդան ինձ օգնություն բերեց: Ահուրամազդայի շնորհիվ բանակը, որ իմն էր, այն բանակից, որ ապստամբ էր՝ շատ [մարդ] սպանեց: Թալիգարչի ամսի 9-րդ օրն էր այն ժամանակ, երբ կոիվ արեցին: Հետո Դադարչիշը ինձ սպասեց Հայաստանում, մինչ ես հասա Մարաստան»²¹:

5) Թալիյ Դարայավաւ՝ xsayaθiya. Patiy duvitiyam hamiciya hagmata paraita patiš Vaumisam hamaranam cartanaīy. Autiyara nama dahyaus Arminiyaīy avada hamaranam akunava. Auramazdamaly upastām abara. Vāsna Auramazdaha kara hya mana avam karam tyam hamiciyam aja vasiy. Թuravaharahya mahya nyamnām patiy avaθa-šām hamaranam kartam. Pasava Vaumisa cita mān amanaya Arminiyaīy yatā adam arasam Madam.

«Ասում է Դարեհ թագավորը: Երկրորդ անգամ ապստամբները հավաքվեցին [և] դնացին Վահումիսայի դեմ՝ կոիվ անելու: Աուտիյարա անունով նահանգ [կա] Հայաստանում. այնտեղ կոիվ արեցին: Ահուրամազդան ինձ օգնություն բերեց: Ահուրամազդայի շնորհիվ բանակը, որ իմն էր, այն բանակից, որն ապստամբ էր՝ շատ [մարդ] սպանեց: Թուրավահարա ամսի մոտ վերջին էր այն ժամանակ, երբ կոիվ արեցին: Հետո Վահումիսան ինձ սպասեց Հայաստանում՝ մինչ ես հասա Մարաստան»²²:

Այժմ ժողովներ պարզել Դադարչիշի զորաբանակի և հայ ապստամբների միջև տեղի ունեցած ճակատամարտերի վայրերի տեղագրությունը, սկսելով վերջինից՝ Ուլամայից: Այս ամրոցը, մեր կարծիքով, գտնվել է իր անունը մինչև այսօր պահած Յամի լեռնանցքի մատուցներում: Լեռնանցքը (բարձրությունը 1762 մ) ընկած է ներկայիս Իրանական Ադրբեջանի Հյուսիս-արևմտյան մասում՝ Մարանդ և Սոֆիան բնակավայրերի միջև²³: Այն հնուց ի վեր ուներ ռազմագիտական մեծ կարևորություն: Նրան վերաբերող ամենավաղ վկայությունը պահպանված է Ասորեստանի Սարգոն II (մ. թ. ա. 720—705 թթ.) թագավորի Ուրարտուի դեմ ձեռնարկած արշավանքի նկարագրության մեջ: Ահա այդ հատվածը. «ես դուրս եկա Ուրշից և հասա Ուշկայա մեծ ամրոցը՝ Ուրարտուի սահմանների սկիզբը, որը Զարանդա նահանգի լեռնանցքը փակելով որպես դուռ, պահում էր սուրհանդակներին, և ճանաչյալներ հագած Սուրիի»²⁴ ծալքամասում Մալլաու նոճիների լեռան վրա փայլում էր որպես ուղեւորներ...»²⁵:

Յամի լեռնանցքի նման, նրա շրջակայքը ևս հնում ուներ ռազմագիտական կարևոր նշանակություն: Եթե առաջինը հիմնական անցուղին էր, ապա երկրորդը որպես պլացդարմ էր ծա-

²⁰ Նույն տեղում, 27, 37—42 (տե՛ս նույնը):

²¹ Նույն տեղում, 28, 42—49 (տե՛ս նույնը):

²² Նույն տեղում, 30, 57—63 (տե՛ս նույնը):

²³ Տե՛ս հետևյալ քարտեզը. «Страны Ближнего Востока (Турция, Ирак, Иордания, Ливан, Сирия, Израиль, Кипр)». Карта составлена в 1964 г., подготовлена к изданию в 1965 г., отпечатана в 1966 г.

²⁴ Յամի լեռնանցքի հարավային մուտքի մոտ կառուցված «Ուշկայան, որեմն, բաժանում էր միայնացից Սուրի և Զարանդա շրջանները» (Ն Ա դ ո ն ց. Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 359): Իսկ «...Զարանդա երկիրը պիտի ընդգրկեր, բացի Զարաւանդից, նաև Հեր և Մարանդ գավառները» (Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի. Երևան, 1963, էջ 52):

²⁵ Я. А. Манандян. О некоторых спорных проблемах истории и географии древней Армении. Ереван, 1956, с. 40.

ուսում Հայկական լեոնաշխարհից հյուսիս-արևմտյան իրան. իսկ այնտեղից հակառակ ուղ-
ղությամբ Հայկական լեոնաշխարհ ներխուժող զորաբանակների համար: Ըստ այսմ, պատա-
հական չէ կովախնձորի այն դերը, որ վիճակվել էր նրան՝ նախ Ուրարտուի և Մանայի. ապա՝
Մեծ Հայքի և Ատրպատականի (Փոքր Մարաստան), վերջապես՝ Մեծ Հայքի և Սասանյան ի-
րանի սահմանային վեճերում: Դեռևս Սարգոն II-ն էր մատնանշում, որ Ուրարտուի կազմում
գտնվող Սուբի նահանգը «Ուրարտուի մարդիկ կոչում են մանացիների երկիր»²⁶: Ուրեմն, ան-
տարակույս, Ուրարտուն այն գրավել էր Մանայից: Այս նույն նահանգի վերաբերյալ Ն. Ադոն-
ցը գրում է. «Եթե Սուբին նույն Սումբի անունն է, կարելի է դրա տակ ենթադրել Տῠβδᾱχը
չրանը, որը հռոմեական եռագետ, հռչակավոր զորավար Մարկոս Անտոնինոսը 33 թվականին
դիջեց Ատրպատականի թագավորին (Strabo, IX. II, էջ 523)... Ըստ Ստրաբոնի, հայերը Սիմ-
բակեն խել էին մեղացիներից. իսկ Անտոնինոսը այն վերադարձրեց նրանց»²⁷: Մեր կարծիքով,
Սուբիի և Տῠβδᾱχ-ի նույնացման հարցում Ն. Ադոնցը միանգամայն ճիշտ է վարվում, սա-
կայն նա սխալվում է, երբ այն փնտրում է Կապուտան (Ուրմի) լճից արևմուտք. նրա և
Ջագրոսի լեոնաշխարհի միջև²⁸, որովհետև այժմ վերջնականապես ճշտված է Սուբի նահանգի՝
Կապուտան լճից հյուսիս-արևելք գտնվելու իրողությունը²⁹ (ի դեպ, այդ է ցույց տալիս նաև
ժամանակակից Սոֆիան անունը՝ Սուբի տեղանվան հետ իր ունեցած ծագումնաբանական
ակնհայտ կապով)³⁰:

Հետագայում ևս այդ շրջանը չէր կորցրել կովախնձոր-պլանցյալների իր դերը, բայց արդեն
Արշակունյաց Հայաստանի և Ատրպատականի տիրացած Սասանյան Պարսկաստանի վեճում:
Նրա վրայով, ըստ Երևույթին նույն Յամի լեոնանցքով էին պարսից բանակները ներխուժում
Մեծ Հայք, իսկ հայոց բանակները՝ Ատրպատական: Բերենը Փավստոս Բուզանդի բաղամթիվ
վկայություններից երկուսը. «Այլ թագաւոր: Պարսից [Շապուհ] հանդերձ ամենայն իւրովը զօ-
րօքն ի ժամանակի անդ յայնմիկ՝ քանզի եւ նա խաղացեալ գայր ի վերայ Հայաստան երկրին
ընդ զէմ սոցա, ապա սորա փութացեալը հասանէին յԱտրպատական. եւ գտանէին գրանակն
արքային Պարսից ի Թաւրէշ բանակեալ»³¹: «Յետ այսորիկ Բոյիկան մեծ նախարար Պարսից,
եւ քառասուն բեր ընդ նմա, գային հասանէին յԱտրպատական կամէին ասպատակ առնել
յերկիրն Հայոց: Ապա զառաջեօք անգանէր Վասակ [Մամիկոնեան] իւրով Հայաստան զնդան,
հարկանէր զգօրսն ամենայն Պարսից, եւ զԲոյեկանն սպանանէր ի Թաւրէշ»³²:

Մարանդի և Սոֆիանի միջև, Յամի լեոնանցքից բացի, հին Ուլամայի անունը պահել են
նաև նույնանուն արոտավայրն ու իջևանատունը՝ քանիցս հիշատակված XIX դարի եվրոպացի
ճանապարհորդների կողմից: Այսպես, օրինակ, անգլիացի դիվանագետ Ուիլյամ Աուդլեյի
1812 թ. ուղեգրության մեջ հանդիպում ենք այդ վայրերի հետևյալ նկարագրությանը. «...դես-
պանը ինձ ուղարկեց Աբբաս Միրզային, որ մի ժամանակից ի վեր իր բանակի մի մասի հետ
բանակած էր Յամի (Yam) արոտավայրում, մոտավորապես ութը փարսանգ հեռու Թավրիզից,
Մարանդի և Նախիջևանի ճանապարհի վրա»³³: Այնուհետև. «...անցնելով մի կարգ բլուրներից

²⁶ Նույն տեղում, էջ 40—41:

²⁷ Ն. Ադոնց, Նշվ., աշխ., էջ 110, ծան. 1:

²⁸ Նույն տեղում, էջ 359:

²⁹ Տե՛ս Ս. Ս. Երեմյան. «Ուրարտուի պետությունը (870—590 թթ. մ. թ. ա.)» քարտե-
զը. Հայ ժողովրդի պատմություն. հ. 1: Н. В. Арутюнян. Бнайинли (Урарту).
Ереван, 1970, с. 302, стр. 515.

³⁰ Պարսկական صوفیان գրությունը իր 3-ով ենթադրում է ավելի հին sulīān
արտասանությունը, երբ հնարավոր է պարս. sulīān < պահլ. *supiān անցումը (արաբե-
րենի աղղեցությունը բուն պարսկերեն առանձին բառերում ևս f < p, հմմտ. <Pars, <پارس
< pēroz, <افسوس < apšōs, <افان < napak և այլն): Իսկ *supiān-ը (*supi-ān) կա-
րող էր խուլ կամ չնչեղ խուլ տարբերակը լինել ձայնեղ *subiān-ի (*subi-ān):

³¹ Փաստոսի Բուզանդացու պատմություն հայոց. Թիֆլիս, 1912, Դ, իհ:

³² Նույն տեղում, Դ, լթ:

³³ Տե՛ս Հ. Հակոբյան. Ուղեգրություններ. հ. 2, Երևան, 1934, էջ 381:

և շատ առուններ, իններորդ կամ տասներորդ մղոնում, անցանք մի մեծ քարվանսարայից, երբեմն աղյուսի մի գեղեցիկ շենք, այժմ քայքայման ենթակա։ Սա դտնվում էր մեր ճանապարհի աջը, և կոչվում էր քարվանսերայի Յամ (caravansera-i-Yam), երա մոտ կան մի այլ շենքի մի բանի կամարներ և քանդված պատերը։ Մի մղոն առաջանալով տեսանք մոտավորապես երկու հարյուր վրան, ամառային ճամբարը սերբազների (serbazi) մի վաշտի, Մարանդի ընդարձակ ու բարեբեր դաշտը երևում էր խտորեն սփռված գյուղերով ու ծառերով, պարտեզներով և արտերով բարձր մշակութային վիճակում³⁴։

Երմուղիի դեպպանություն (1817 թ.) անդամ Մորից ֆոն Կոցեբուն Մարանդի և Սոֆիանի միջև, այսինքն՝ Յամի լեռնանցքի մատուցներում, ճանապարհի վրա հիշատակում է երեք գյուղեր՝ Kırşa, Dışa և Mirsasat՝ անուններով³⁵։ Ամենայն հավանականությամբ, սրանցից որևէ մեկը համապատասխանում է հին Ույամային։ Իսկ թե դրանցից հատկապես որը, մեր կարծիքով, ցույց է տալիս հիշյալ գյուղերից մեկի՝ Դիգա անունը³⁶։ Վերջինս նույնական է նոր պարսկերեն diz (دیز «ամրոց, բերդ») բառի հետ³⁷, որի վերջնաձայն շ-ն խոսում է հօգուտ իր հյուսիս-արևմտյան իրանական («մարապարթևական») ծագման³⁸։ Մեր տեղանվան դեպքում, անստրակույս, գործ ունենք «ամրոց, բերդ» նշանակող իրանական բառի մարական ձևի հետ, քանի որ այն կրող բնակավայրը գտնվում է հին Ատրուպատականի (Փոքր Մարաստանի) տարածքում։ Ուրեմն, հնարավոր է, որ ինչպես ժամանակակից Յամ տեղանունն է ծագում հնագույն Uyama ձևից (նախաձայն u-ի անկումով), այնպես էլ Dīza տեղանունն է ծագում մարերեն *dīza («ամրոց, բերդ») բառից։ Այս դեպքում Յամի լեռնանցքի մատուցներում գտնվող Դիգա գյուղը համապատասխանելու է Բեհիստունի արձանագրության Uyama nama dida-ին («Ույամա անվամբ ամրոց»-ին), որտեղ հին պարս. dida=մար. *dīza (>Dīza)։

Հայ ապստամբների և Դադարչիշի զորաբանակի միջև մղված երրորդ ճակատամարտի՝ Հայաստանի մարաստանամերձ մի շրջանում տեղի ունենալու հանգամանքը մեկ անգամ ևս ցույց է տալիս ճշմարտացիությունն այն հայագետների, ըստ որոնց Դադարչիշի նախորդ «հաղթանակները» պարզապես պարտություններ են եղել³⁹։ Հայաստանում երկու ճակատամարտ տալուց հետո Դադարչիշի հայ-մարական այնպիսի մի սահմանամերձ շրջանում, ինչպիսին Յամի լեռնանցքի շրջակայքն էր⁴⁰, կարող էր հայտնվել, անկասկած, Հայաստանի խորքերից նահանջելուց հետո միայն։

Իսկ ի՞նչ ճանապարհով էր նահանջում Դադարչիշի բանակը։ Այս հարցի պատասխանը կարող ենք ստանալ՝ ճշտելով նրա մղած մյուս երկու ճակատամարտերի վայրերի տեղագրությունը. Երկրորդ ճակատամարտը հայ ապստամբների և Դադարչիշի զորաբանակների միջև, ինչպես տեսանք, տեղի էր ունեցել «Տիգրա անվամբ ամրոցի» (Tigra nāma didā) մոտ։

34 Նույն տեղում, էջ 434—435։

35 Նույն տեղում, էջ 556։

36 Գերմաներեն dışa գրությունը արտացոլում է dīza արտասանությունը։

37 Sб'а Персидско-русский словарь. Том II, М., 1970, с. 693.

38 Հին պարսկերենում բառն ունեք dida տեսք՝ հյուսիս-արևմտյան իրանական լեզուների շ-ի դիմաց իր համար օրինաչափ d-ով (И. М. Оранский. Иранские языки в историческом освещении. М., 1979, с. 149)։

39 Կ. Բաւմաշյան. Դարեհի արշավանքն ի Հայս, էջ 33—36։ Լեո. Նշվ. աշխ., էջ 254—255, Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հ. Ա, էջ 51։ Հ. Ժամկոչյան. Հայաստանը նախնադարան-համայնական հասարակության և ստրկատիրության շրջանում, էջ 143։

40 Ի դեպ, այս կողմերով էր անցնում հայ-մարական սահմանը նաև հաջորդ դարերում՝ ընդհուպ Մեծ Հայքի միասնական թագավորության տրոհումը մ. թ. IV դարի վերջին (տե՛ս Ս. Ս. Երեմյան. «Արտաշեսյանների թագավորությունը մ. թ. ա. I դ.» քարտեզը. Հայկական սովետական հանրագիտարան. հ. 2, էջ 40—41։ Նույն ի՞ Հայաստանը I—IV դդ.» քարտեզը. Հայկական ՍՍՏ ատլաս, էջ 104։ Նույն ի՞ Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի աշխատության քարտեզը)։

Հայտնի է, որ հնում Թավրիդից Յամի լեռնանցքով Հայոց Միջնաշխարհի սիրտը՝ Արարատյան դաշտի ձախափնակ. տանող երկու բանուկ ճանապարհներ գոյություն ունեին։ Դրանցից մեկը Թավրիդ—Մարանդ—Խալ—Նախիջևան. իսկ մյուսը՝ Թավրիդ—Մարանդ—Ջուղա—Նախիջևան ճանապարհն էր։ Այս երկու ճանապարհներից մեկի վրա էլ պետք է դտնվեր Տիգրա ամրոցը։ Ամենայն հավանականությամբ, ամրոցը գտնվել է սրանցից երկրորդի վրա, համապատասխանելով հայկական Տիգրանավանին, որը գտնվում էր Գողթն գավառում. հետագա Զուղայի տեղում կամ մոտակայքում⁴¹։

Բավրիդ—Մարանդ—Ջուղա—Նախիջևան—Շարուր—Արարատյան դաշտ ճանապարհի հայկական հատվածի համառոտ նկարագրությունը պահպանված է արաբ մատենագիրների երկերում։ Ըստ Իբն Խորդադեհի. «Մարանդից մինչև [Արաքսի] հովիտը 10 փարսախ է. այնտեղից մինչև Նախիջևան (Նաշավա)՝ 10 փարսախ, ապա մինչև Դվին (Դաբիլ)՝ 20 փարսախ»⁴²։ Ըստ Կուդաբայի. «Մարանդից մինչև աս-Սարի [Արաքսի] հովիտում, 10 փարսախ է. հովիտից մինչև Նախիջևան (Նաշավա)՝ 10 փարսախ, Նախիջևանից մինչև Դվին (Դաբիլ)՝ 20 փարսախ»⁴³։ Մարանդից մինչև Արարատյան դաշտ ձգվող այս ճանապարհի շուրջ ընկած շրջանների ստրատեգիական կարևոր դիրքը օտար նվաճողներից զնահատում էին հատկապես միջնադարյան Ասորպատականի մասնագետները։ Ինչպես Ա. Ն. Տեր-Ղևոնդյանն է գրում. «...քանի դեռ Նախճավանը և Արաքսի հովիտը հայ իշխանների ձեռքում էին, օտար տարրը Դվինում դժվարությամբ կարող էր իշխել»⁴⁴։ Այս իսկ պատճառով արաբ նվաճողները իրենց ամիրայություններն էին ստեղծել ինչպես Խոյ-Ջարավանդ-Մարանդ անդրարաքսյան շրջաններում, այնպես էլ Գողթն-Նախիջևան-Շարուր այսրարաքսյան շրջաններում⁴⁵։ Անտարակույս, դա անտեսել չէին կարող նաև հայ տիրակալները, որոնք հիշյալ շրջանների կորստից հետո ստիպված էին լինելու կամ իրենց կենտրոնատեղին հեռացնել Արարատյան դաշտից (ինչպես վարվեցին, ասենք, Բագրատունիները) կամ վերանվաճել և ամրացնել դրանք (ինչպես, մեր կարծիքով, վարվել էր Տիգրան Երվանդյանը)⁴⁶։

Գողթնի Տիգրանավան բնակավայրը, ամենայն հավանականությամբ, այդպես է կոչվել ի պատիվ իր հիմնադիր Տիգրան Երվանդյանի՝ Աքեմենյան Կյուրոսի (մ. թ. ա. 550—529 թթ.) ժամանակակցի ու դաշնակցի⁴⁷։ Ըստ Մովսես Խորենացու, այս Տիգրանը հիմնել էր Տիգրանակերտ անվամբ մի քաղաք և այնտեղ բնակեցրել իր քրոջը՝ Մարաց Ամղահակ թագավորի կին Տիգրանուհուն⁴⁸։ Անտարակույս, հիշյալ քաղաքը չէր կարող լինել Տիգրան Մեծի (մ. թ. ա. 90—55 թթ.) կողմից Աղձնիք նահանգում կառուցված Տիգրանակերտը կամ նրա հիմնադրած նույնանուն մյուս բնակավայրերից որևէ մեկը։ Դա կարող էր լինել հենց Գողթնի Տիգրանավանը, որովհետև նախագրաբարյան հայերենում առանց և կերտ-ը ոչ միայն համարժեք տեղանվանակերտներ են եղել, այլև ինքնուրույն կիրառություն ունեցող նույնիմաստ բառ-միա-

41 Տե՛ս Ս. Տ. Երեմյան. «Հայաստանը մ. թ. ա. 66—մ. թ. 224 թվականներին» քարտեզը. Հայ ժողովրդի պատմություն. հ. 1։ նույնի՝ «Արտաշեսյանների թագավորությունը մ. թ. ա. 1 դ.» և «Արշակունիների թագավորությունը 298—387 թթ.» քարտեզները. Հայկական սովետական հանրագիտարան. հ. 2, էջ 40—41, 112—113։

42 Н. Караулов. Сборник сведений арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане—«Сборник материалов для описания местностей и племен Кавказа». Вып. XXXII, Тифлис, 1902, с. 12—13.

43 Նույն տեղում, էջ 27։

44 Հայ ժողովրդի պատմություն. հ. 3, Երևան, 1975, էջ 60։

45 Նույն տեղում, էջ 59—60։

46 Ի դեպ, հայ գահակալների կողմից այդ նույն շրջանների ստրատեգիական կարևոր դիրքի զնահատման մասին է խոսում այն հիասուրժես, որ առաջին Արտաշեսյանների օրոք (գուցե թե՛ ավելի վաղ նա) դրանք կաղմում էին «Երկրորդական դահ»-ի տիրույթները։ Իսկ վերջինիս տեղը միևնույն ժամանակ հայոց արևելյան ղորքերի հրամանատարն էր (տե՛ս Խորենացի, Ա, Լ, Բ, Ը, Բ, Ժա, Բ. Կբ)։

47 Xen., Cyr., III, 1, 7—8; III, 1, 14; III, 1, 36—37; III, 1, 41—43, III, 2, 1—3, III, 2, 8; III, 2, 11; III, 3, 5. Խորենացի, Ա, Իբ, Ա, Իդ։

48 Խորենացի, Ա, Լ։

վորեն (երկրորդի համար հմմտ. «Կերտա. քաղաք՝ րստ Հայոց»)⁴⁹, Հետագա Զուղայի տեղում կամ նրա մոտերքում, Ատրպատականից Արարատյան դաշտի ձախափնյակ տանող ճանապարհի վրա կառուցված Տիգրանակերտ-Տիգրանավանը, անտարակույս, կոչված էր հուսայի պատվար դառնալու հյուսիս-արևելյան Հայաստանի վարչական կենտրոնին⁵⁰ Մարաստանի կողմից սպառնացող վտանգի դեմ հանդիման:

Ըստ երևույթին, Տիգրան երվանդյանի կառուցած այս բնակավայրը նախապես կոչվել է *Տիգրանայ աւան կամ *Տիգրանայ կերտ («Գրեթե նույնը կարելի է ասել նաև Անգոկաքերդ և նման հատուկ անունների համար, որոնք կարող են ոչ թե ա հոգակալով կազմված լինել, այլ առաջացած սեռ. Անդոկայ բերդ ձևից»⁵¹): *Տիգրանայ աւան կամ *Տիգրանայ կերտ ձևերից որևէ մեկի առաջին մասն է ներկայացնելու Բեհիստունի արձանագրության Տիգրա հապավված ձևը: Վերջին դեպքում պարսիկ գրագիրը, հավանաբար, աղբյուր է Տիգրիս գետի հին իրանական Tigrā անունից, կամ հին իրանական tiğra «նետ» բառից⁵²: Եթե ճիշտ է Tigra—Տիգրանավան նույնացումը, ապա, կարող ենք ենթադրել, որ Դադարշիշը իր երկրորդ ճակատամարտը ապստամբ հայերի դեմ մղել էր այստեղ՝ Զուղայի մոտերքում և պարտվելուց հետո Զուղա—Մարանդ—Թավրիզ ուղղությամբ քաշվել դեպի հայ-մարական սահմանամերձ շրջանը՝ Ուլյամա (Յամի լեռնանցքի մոտակայքում):

Այսպիսով, եթե Դադարշիշի բանակը նահանջել էր Զուղա—Մարանդ—Թավրիզ ուղղությամբ, ապա նրա մղած առաջին ճակատամարտի վայրը կարող էր գտնվել նույն ճանապարհի ալն հատվածում, որը Արարատյան դաշտից Շարուրի և Նախիջևանի վրայով հասցնում էր Զուղա: Մեր կարծիքով, Դադարշիշի մղած առաջին ճակատամարտի վայրը գտնվել է հետագա Շարուրի Դուղանդա (Դուղանգահ) գյուղի մոտ, որը և կարող էր լինել Բեհիստունի արձանագրության «Զուղա(հյա) անվամբ ավանը» (Zūzahya nama avahanam): Նորաշենից վերև, Արփայի ստորին հոսանքի աջափնյակում գտնված այս փոքրիկ գյուղի անվան պարսկա-թյուրքական ձևը دۇدانگاھ է (Dūdangāh, նոր արտասանությամբ՝ Dūdāngāh)⁵³, ռուսական ձևը՝ Дуданга կամ Дудамга (վերջինս 1939 թ. հրատարակված Հայկական ՍՍՀ քարտեզում)⁵⁴, իսկ անգլիականը՝ Dudangah: Նրա վերաբերյալ Ուիլյամ Աուդլեյը թողել է հետևյալ տողերը. «Տառնեղու ժամվա հոգնեցուցիչ ձիավարումից հետո, մենք հինգ կամ վեց մղոն. ևս առաջ գնացինք և [ամսի] իննիս կանուխ իջևանեցինք Դուղանգա (Dudangah)՝ Նախիջևանից մոտավորապես քառասուն մղոն, տանջված տաքից, լվերից, մթեղներից, մինչև [հուլիսի] տասի ժամը երկուրը, երբ առավոտը, տակավին մութ, մենք ճամփա ելանք և հասանք Դավալու (Develu) 28 մղոն»⁵⁵:

⁴⁹ Кερετα, τοῦτο ὁ Ἀρχιεπίσκοπος (Hesych.).

⁵⁰ Ենթադրաբար դա կարող էր լինել կամ Արգիշտիիսիլի-Արմավիրը, կամ Էրեբունի-Երևանը, կամ Արտիմեդ-Էջմիածինը: Այդ առթիվ տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, էջ 453, 459: Մ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն. Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, էջ 37, 116: Գ. Ա. Տիգրա յ ա ն. Երվանդյան Հայաստանի տարածքը. «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 2, էջ 71: Ա. Շ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Դիտողություններ «Վարդգես մանկան» վիպական հատվածի վերաբերյալ. նույն տեղում, 1975, № 2, էջ 220, 225:

⁵¹ Հ. Ա ճ ա ո յ ա ն. Լիակատար քերականություն հայոց լեզվի. հ. 3, Երևան, 1957, էջ 134:

⁵² Ընդ որում, Տիգրիս գետի (հին հուն. Τίγρις) հին իրանական Tigra անունը ևս նույնպիսի աղբյուրության արդասիք է: Չնայած, ըստ հունա-հռոմեական հեղինակների, «նա արագության պատճառով է անվանվում Տիգրիս. այսպես են անվանում մարերը նետը» (Plin. Nat. Hist. VI, 31, 3), բայց, իրականում, սա իրանական իմաստավորումն է գետի սեմական Diglat (հմմտ. հայ. Դղաք, Դկաք, Դկաք) անվան. Tigra<*Digra<Digla-t (որովհետև ին իրանական բառերում մյուս լեզուների 1-ի դիմաց r է):

⁵³ «Кавказский календарь на 1855 год». Тифлис, 1854, с. 288.

⁵⁴ «Армянская ССР». Пробный тираж карт 2-го тома Большого советского атласа мира. Отпечатано на 2-ой картфабрике ГУГК при СНК СССР. М., 1939.

⁵⁵ Հ. Հ ա կ ր յ ա ն. Ուղեգրություններ. հ. 2, էջ 452: Մեկ ուրիշ անգլիացի դիվանագետ՝ Էռն Զոնսոնը, որն այս նույն ճանապարհով անցել է 1817 թ., բնակավայրի անունը բերում է Doodhungea ձևով (նույն տեղում, էջ 637):

Գլուղանվան հին հայկական ձևը, ըստ երևույթին, հենց Դուլանգահ-ն է՝ բաղկացած Դու-ղահ- և -գան բաղադրիչներից: Վերջինս պետք է նույնացնել հայերեն գահ (եղտր. բարձր տեղ, ժայռերի գլուխ) բառի հետ, որն առկա է նաև զանազան, զանազանի (բարձրավանդակ տեղ), զահավէթ (առնդունդի մեջ զորված) և զահիւն (առնդունդ) բառերում⁵⁶: Ընդ որում, սա չէր կարող լինել ետեղ, վայր՝ կամ «գահ» նշանակող պարսկերեն օհ (gah), նոր ար-տասանությամբ՝ ցահ) բառը, որովհետև տեղանվան մեջ ունենք ոչ թե օհ (gah > gah), ալ օհ (gah, նոր արտասանությամբ՝ ցահ): Ինչ վերաբերում է տեղանվան առաջին Դու-ղահ- (Dūdan-) բաղադրիչին, ապա հարևան մարերի բերանում այն կարող էր վերածվել *Zūzan-ի⁵⁷ և հին պարսկական սկզբագրերում արտացոլվել Zūza(hva) տեսքով⁵⁸: Հա-մապատասխանության տեսանկյունից հիշենք, որ նույն Բեհիստունի արձանագրության արա-ղերեն տեքստում Կյուրոսի կրտսեր որդու անունը բերված է ոչ թե հին պարսկական Bardiya, ալ մարերեն արտասանության արտացոլող Bar-zi-ya ձևով⁵⁹: Եթե հիշտ է Zuzahya = Dūdangah նույնացումը, ապա Դադարշիլի զորաբանակի և ապստամբ հայերի միջև մղված ա-ռաջին ճակատամարտի վայրը գտնվելու էր Շարուրում (այժմյան Նորաշենի մոտերքում), երկ-րորդը, ինչպես ասվեց, գտնվելու էր Գողթնում (հետագա Զուղայի մոտերքում), իսկ երրորդը՝ Յամի լեռնանցքի շրջակայքում (այժմյան Մարանդի և Սոֆիանի միջև): Այս դեպքում, դուրս է գալիս, որ Դադարշիլի պարսկական զորաբանակը Արարատյան դաշտի մատույցներից նա-հանհել էր դեպի Մարաստանի սահմանը՝ Արարատյան դաշտ—Շարուր—Նախիջևան—Զուղա—Մարանդ—Թավրիզ հին ճանապարհով՝ ներկայիս Երևան—Զուլֆա—Թավրիզ երկաթգծի ուղղու-թյամբ:

Այս նույն ճանապարհով՝ Թավրիզ—Մարանդ—Նախիջևան—Շարուր ուղղությամբ հետա-գալում ևս բազմաթիվ արշավանքներ են տեղի ունեցել դեպի Հայաստանի խորքերը՝ հիմնակա-նում Արարատյան դաշտի ձախափնյակը: Այսպես, Երինակ, Դևոնդի վկայությամբ, արաբների կողմից Ատրպատականի նվաճումից հետո. «Եւ մեծ մասն ղօրուն հատեալ ասպատակէին յաշ-խարսս Հայոց ընդ կողմն Պարսից, եւ առնուին ի գերութիւն ղաւանս Մարաց (Արաբսի աշափ-նյակում—Ս. Պ.) եւ զգաւառն Գողթն եւ զղաստակերտն Նախջաւանու. եւ դբաղումս յարանց ընդ սուր անցուցանէին, եւ զայս գերի վարեալ կանամբք եւ մանկտեալ՝ անցուցանէին ընդ գետն Երասխ ընդ հունն Զուղայոյ: Եւ ընդ երկուս բաժանեալ զօրքն՝ ոմանք ղղերնայսն դարձու-ցանէին յաշխարսն իրենանց: Եւ գունդ մի հատեալ ասպատակէին ընդ գաւառն Արտաղ...»⁶⁰: Այս նույն ճանապարհով էին Հայաստանի խորքերը ներխուժել նաև Ատրպատականի արաբ ա-միրա Յուսուֆ իբն աբու Սաջի (909—910 թթ.), Ատրպատականի ղեկավար զորահրամանատար Լաշարի իբն Մարդիի (937 թ.), հորեղմի թագաժառանգ Զալալեղիի (1225 թ.) և Լեկիթի-մուրի (1386 թ.) հրոսակախմբերը:

Պիտի ենթադրել, որ Արարատյան դաշտի ձախափնյակում գտնվող հյուսիս-արևելյան Հա-յաստանի (հետագայի 18-րդ սատրապության) վարչական կենտրոնի դրավումն է եղել այդ նույն ճանապարհով Արարատյան դաշտի մատույցները հասած Դադարշիլի զորաբանակի նը-պատակը: Ընդ որում, թե՛ Դադարշիլը, թե՛ Վահուստան անանց զորաբանակների Հայաստան ուղարկվել էին կարողով, չնայած Բեհիստունի արձանագրության մեջ Դարհը նրանց դիմում է եղակի և ոչ թե հոգնակի հրամայականի 2-րդ դեմքով (paraidiy «գնա՛»՝ paraita «գնացե՛ք»-ի փոխարեն): Հակառակ դեպքում դուրս կգա, որ այս զորավարները Հայաստանում

56 Չ. Ա. ճառյան. Հայերեն արձագանքային բառեր. հ. 1. Երևան, 1971, էջ 502:

57 Ինչպես ասվեց, հին պարսկերեն ձ-երին մարերենում (և հյուսիս-արևմտյան իրանա-կան լեզուներում առհասարակ) համապատասխանում էին շ-եր:

58 Հին պարսկական սկզբագրերում ռեգային հնչյունները, մասնավորապես ու-ն, բաղա-ձայններից առաջ չէին արտացոլվում: Հմմտ. Gadara (= Gandara), Nadiatabaira (= Nadin-atabaira), Hiduya (= Hinduya), Kudurus (= Kundurus) և այլն:

59 M. A. Дандамаев. Иран при первых Ахеменидах (VI в. до н. э.), с. 90, прим. 24.

60 Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց. Ս.-Պետերբուրգ, 1887, դ. Բ:

61 Հակառակ Վ. Վ. Սարգսիսի ենթադրության (В. В. Саргсис. Указ. соч., с. 12):

իրենց սպասող պարսկական զորքեր ունենե՞ն⁶²։ Բայց անհավանական է, որ ապստամբ հայերը իրենց հայրենիքում գտնվող թշնամիներին թողած ներխուժելին հյուսիսային Ասորեստան (Իլ-դալա)։ Բացի դրանից, Հայաստանում կռվող պարսից բանակների համար Դարեհն ասում էր «բանակը, որ իմն էր» (kara hya mana)։ Ուրեմն, դրանք Հայաստան էին հղվել հենց իր՝ Դարեհի կողմից, որի պատճառով էլ չէին կարող լինել ավելի վաղ (ասենք, Կամրյուսեսի կամ կեղծ Բարդիայի օրոք) Հայաստանում տեղաբաշխված և կայազորային ծառայություն կատարող զորամասեր։ Ըստ երևույթին, Դադարձիչը պարսկական գորաբանակով ներխուժել էր Հայաստան, օգտվելով այն հանգամանքից, որ հայ ապստամբների հիմնական ուժերը գտնվում էին հարավում՝ առերես տանամբձ շրջաններում։ Սակայն, ինչպես երևում է ղեպերի հետագա ընթացքից, Դյուսիս-արևելյան Հայաստանի ապստամբների հարվածների տակ նա ստիպված է եղել իր զորաբանակով նահանջելու դեպի հայ-մարական սահմանը։ Ընդ որում, Արարատյան դաշտից նահանջող պարսից զորաբանակը ստիպված է եղել երիցս ճակատելու իր ճանապարհորդ վազած հայ ապստամբների դեմ։ Ծակատամարտերից առաջինը, ամենայն հավանականությամբ, տեղի էր ունեցել Արփայի գետանցի մոտ (Դուզանգահ—Zūzahya), երկրորդը՝ Արաքսի գետանցի մոտ (Ջուղա—Տիգրանավան—Tigra), իսկ երրորդը՝ Յամի լեռանցքի մատուցներում (Դիգա = Uyama)։

Իր Դադարձիչի զորաբանակը, իրոք, նահանջել էր և որ այս իսկ պատճառով հայ ապստամբներին վերջնականապես ընկճել չէր հաջողվել (չնայած Վահուստայի ձեռք բերած հաջողություններին), երևում է հետևյալից։ Նախ, հայ ապստամբների առաջնորդներին մահապատիժ ենթարկելու մասին որևէ խոսք չկա ո՛չ Բեհիստունի արձանագրության, ո՛չ էլ Դարեհի թողած մյուս արձանագրությունների կամ դրանց պատճենների մեջ (ի տարբերություն «արքայից արքայի» դեմ ոտքի ելած մյուս ապստամբ երկրների առաջնորդների)⁶³։ Ավելին. չեն հիշատակվում անգամ նրանց՝ անունները։ Իհարկե, «ս չէր կարող հետևանքը լինել հայերի նկատմամբ Դարեհի ունեցած ինչ-որ համակրանքի կամ բարյացակամության, որովհետև բաբելոնյան վերջին ապստամբության առաջնորդին շարաշար մահվան դատապարտելուց հետո Դարեհը արամայի էր նրան հիշատակել արձանագրության մեջ թե՛ ըստ էթնիկական պատկանելության (arminiya), թե՛ անվամբ (Araha), թե՛ հայրանվամբ (Haldita-ի որդի)⁶⁴։ Ապա, Հայաստանի վերաբերյալ արձանագրության մեջ երբևէ չեն զործածվում «հետո երկիրն իմը դարձավ» կամ «ահա թե ինչ արվեց իմ կողմից (այսինչ երկրում)» արտահայտությունները։ Իսկ դրանք գործածվում են (երբեմն երկուսն էլ միասին) թե՛ Մարաստանի⁶⁵, թե՛ Վրկա-նի⁶⁶, թե՛ Մարդիանայի⁶⁷, թե՛ Պարսկաստանի⁶⁸, թե՛ Բաբելոնի⁶⁹, թե՛ Խուսիստանի⁷⁰, թե՛

⁶² Այս փաստից նման հետևություն էր անում Վ. Վ. Ստրուվեն (նշվ. աշխ., էջ 12, 15), մոռանալով այդ նույնը պնդելու Դարեհի դեմ ուղղված իր կազմակերպչի կողմից (այսինչ երկրում) արտահայտությունները։ Իսկ դրանք գործածվում են (երբեմն երկուսն էլ միասին) թե՛ Մարաստանի⁶⁵, թե՛ Վրկա-նի⁶⁶, թե՛ Մարդիանայի⁶⁷, թե՛ Պարսկաստանի⁶⁸, թե՛ Բաբելոնի⁶⁹, թե՛ Խուսիստանի⁷⁰, թե՛

⁶³ Սրանից ամենևին չի հետևում, թե Հայաստանի ապստամբները առաջնորդ չեն ունեցել (տե՛ս В. В. Струве. Указ. соч., с. 17, 20), որովհետև հնարավոր չէր, որ Դարեհի դեմ ելած ապստամբների համար հայ առաջնորդ (հանձին Արախայի) հեռավոր Բաբելոնում գտնվեր. իսկ Հայաստանում՝ ոչ։ Մանավանդ որ իրենց երկիրը ներխուժած թշնամուն յոթ ամիսների ընթացքում հինգ ճակատամարտ տված հայ ապստամբները այդպիսի կազմակերպվածություն ցուցաբերել չէին կարողանա առանց իրենց գործողություններին նպատակամղված ուղղություն տվող մարդկանց։

⁶⁴ Beh., III, 49, 78—79; III, 50, 90—92.

⁶⁵ Նույն տեղում, II, 34, 91—92:

⁶⁶ Նույն տեղում, 37, 9—10:

⁶⁷ Նույն տեղում, III, 39, 19—21:

⁶⁸ Նույն տեղում, 44, 52—53:

⁶⁹ Նույն տեղում, 51, 1—2:

⁷⁰ Նույն տեղում, V, 71, 13—14:

Օսկաստանի⁷¹, թե՛ Աբաքոսիայի⁷² ապստամբների դեմ տարած հաղթանակների նկարագրություններից հետո:

Եթե ճիշտ են Ձուզա, Տիգրա, Ույամա վայրերի մեր առաջարկած տեղագրությունները, ապա դուրս է գալիս, որ Դադարշիշի զորաբանակը մարտերով նահանջել էր Շարուր—Նախիջևան—Գողթն—Մարանդ շրջանների վրայով: Այս շրջանները, ըստ Հերոդոտի, զբաղեցնում էին «սասպեյրները, իսկ այստեղից անցնելուց հետո կարելի է հասնել մարական երկրեր»⁷³: Այս նույն շրջանները, ըստ Ստրաբոնի, բնակեցված էին սարապարների, այսինքն՝ «Շարայի զարմերի»⁷⁴ (հմմտ. Շարառ տեղանունը)⁷⁵ կողմից, որոնք «բնակվում էին Արմենիայից վերև՝ գուրանիացիների և մարերի հարևանությամբ»⁷⁶: Մեկ ուրիշ աղբյուր մենք խոսել ենք հերոդոտյան սասպեյրների, ստրաբոնյան սարապարների և հին հայկական ավանդազրույցներից հայտնի «Շարայի զարմերի» նույնության վերաբերյալ⁷⁷, փորձելով հիմնավորել նրանց հնդեվրոպական՝ հայ-հինթրական (հայկական տարրի գերակշռությամբ) բնույթը⁷⁸: Քանի որ հիշյալ շրջանները բնակեցված էին սասպեյր-սարապարներով, ուրեմն, հենց վերջիններս էին լինելու Դադարշիշի պարսից զորաբանակին հետապնդած և նրա դեմ ճակատած Հայաստանի ապստամբները: Ըստ այսմ, պատահական չէ, որ Բեհիստունի արձանագրության մեջ, ինչպես նկատել է տալիս Վ. Վ. Ստրովին⁷⁹, Հայաստանի ապստամբները ոչ մի տեղ արմինիյա (արմեն) չեն կոչվում: Իսկապես էլ, Վահոմիսայի և Դադարշիշի դեմ ճակատած ապստամբները արմինիյա կոչվել չէին կարող, որովհետև նրանք եղել են ոչ միայն արմենների, այլև վերջիններիցս տարբեր (այնուհանդերձ հնագույն հայության կազմի մեջ մտած) մեկ ուրիշ ցեղախմբի՝ սասպեյրների, ներկայացուցիչները:

Ի դեպ, արմինիյա-ն «Հայաստանի բնակիչ»⁸⁰ (փոխանակ «արմեն») թարգմանելու փորձերը պետք է անհաջող համարել, որովհետև այդ դեպքում Դարեհր մեր ապստամբներին որպես Armina—Հայաստանի բնակիչներ, կառող էր պարզապես arminiya կոչել: Ճիշտ է, arminiya-ն ածական է՝ կազմված Armina երկրանունից հին պարսկերեն -iya ածականակերտ վերջածանցի միջոցով, սակայն նման կազմություն ունեն նաև abarīya, (h)uvarīya, babarīya, (h)uvarzmiya և hi(n)duya հին պարսկերեն ցեղանունները՝ կազմված Abur (Ասորեստան—Ասորիք), (h)Uvāja (Քուժաստան, Էլամ), Bābirus (Բաբելոն), (h)Uvarazmis (Քորեդ) և Hi(n)du (Հինդ, Սինդ) երկրանուններից: Եթե հրամարվենք arminiya-ին

71 Նույն տեղում, 74, 29—30:

72 Նույն տեղում, III, 48, 75—76:

73 Herod. I, 104 (նաև I, 110 և IV, 37):

74 Ս. Գ. Պետրոսյան. «Շարայի ցեղամիությունը» Հայկական լեոնաշխարհի յուրսիս-արևելքում, էջ 65—68:

75 Гр. Капанцян. Историко-лингвистические работы. Том II, Ереван, 1975, с. 122.

76 Strabo. XI, 14, 14. Այս դեպքում 'Αρμενία-ն հավասարազոր է ոչ թև ամբողջ Հայաստանին, այլ միայն 13-րդ («արմենական») սատրապությանը (հմմտ. Herod. III, 93 և III, 94):

77 Ս. Գ. Պետրոսյան. Հացազգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում, էջ 190—192, 196—197:

78 Նույն տեղում, էջ 202—203:

79 В. В. Струве. Указ. соч., с. 10, 19, 20:

80 Гр. Капанцян. Указ. соч., с. 209: II. М. Дьяконов. Предыстория армянского народа. Ереван, 1968, с. 238, пр. 122. Հին պարսկերենի—iya վերջածանցով կազմված ցեղանունները նույնքան հստակ և կոնկրետ էթնիկական իմաստ էին պարունակում, որքան հայերենի -ցի, (-ացի) վերջածանցով կազմված ցեղանունները: Այսպես, օրինակ, անզիլացի, ֆրանսիացի, գերմանացի, իտալացի, իսպանացի անվանումներից յուրաքանչյուրը նշանակում է ոչ թե Անզիլայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Իսպանիայի բնակիչ, այլ ուղղակի Englishman, Français, Deutsche, italiano, español:

Հինիկական իմաստ վերագրելուց, ապա ստիպված կլինենք նույն կերպ վարվելու նաև վերորեքյալ (և նույնպիսի կաղմությամբ մյուս) հին պարսկերեն ցեղանունների հետ՝ նրանց տակ հասկանալով ոչ թե համապատասխան էթնիկական խմբերին, այլ հիշյալ երկրներից յուրաքանչյուրի բոլոր բնակիչներին (օտարածին տարրերը ներառյալ)։

Վ. Վ. Ստրուվեի կարծիքով, Հայաստանի ապստամբները եղել են ոչ թե հնագույն հայերը, այլ, որոնք էլ տարօրինակ է, սկյութական սակերը⁸¹։ Հայաստանի ապստամբներին նա հայեր չի համարում, ելնելով հիմնականում հետևյալ նկատառումներից. ա) Հայաստանի ապստամբները Բեհիստունի արձանագրության մեջ արմինիյա չեն կոչվում, բ) Հայաստանը ապստամբ երկրների ցուցակում չի հիշատակվում, գ) Բեհիստունի արձանագրության մեջ հայկական ապստամբության սկզբի նկարագրությունը չի բերվում⁸²։ Այս պատճառաբանություններից առաջին երկուսի հիմնադրուկ լինելու մասին արդեն խոսվել է, իսկ երրորդի մասին պետք է նշել հետևյալը։ Ապստամբության սկզբի նկարագրության բացակայությունը պայմանավորված է նրանով, որ այդ սկիզբը աննպաստ ընթացք է ունեցել Դարեհի հղած զորաբանակների համար (ինչը երևում է հայ ապստամբների հյուսիսային Ասորեստան մտած լինելու իրողությունից), ուստի դիտվել է Դարեհի համար անպատվաբեր և, հետևաբար, արձանագրելու համար ոչ պիտանի։ Մի իրողություն։ Վերորեքյալ առարկություններն անտեսելու դեպքում անգամ, անհնար է Հայաստանի ապստամբների մեջ սակեր տեսնելը, որովհետև Բեհիստունի արձանագրությունը նրանց ոչ մի անգամ սակեր չի կոչում։ Իսկ հայտնի է, որ հին պարսիկները քաջ ծանոթ էին ռազմաանհշ սակերին և նրանց որևէ (թեկուզև հայաստանաբնակ) հատվածը կառանձնացնեին այլացեղ (այս դեպքում՝ հայկական) շրջապատից։

Այսպիսով, պարզվում է, որ մ. թ. ա. VI—V դդ. հույների նման (որոնց 'Αρχαϊσμός-ը մասամբ էր միայն ծածկում «հայ» հասկացությունը)⁸³, հին պարսիկները ևս առմինիյա-ն նախապես զործածել են ոչ թե որպես «հայ»-ի, այլ «արմեն»-ի համարժեք, նրա մեջ չընդգրկելով հյուսիս-արևելյան Հայաստանի հիմնական ցեղախմբերին՝ Հերոդոտի սասպելյրեն-րին⁸⁴ և ալարոդիներին⁸⁵։ Այսուհանդերձ, սա չի նշանակում, թե հյուսիս-արևելյան Հայաստանի այս ցեղախմբերը պետք է դիտվեն որպես հնագույն հայությունից առանձին էթնիկական տարր։ Հօգուտ արմենների հետ նրանց ունեցած էթնո-լեզվական ընդհանրության է խոսում, թեկուզև, այն փաստը, որ չնայած հին պարսիկները arminiya ասելով հասկանում էին միայն Հերոդոտի արմեններին, այնուամենայնիվ Armina-ն նրանց համար ամբողջ Հայաստանն էր՝ ներառյալ ինչպես արմինիյա-արմենների երկիրը (հետագա 13-րդ սատրապությունը), այնպես էլ սասպելյրենների և ալարոդինների երկիրը (հետագա 18-րդ սատրապության հիմնական մասը)։

⁸¹ В. В. Струве. Указ. соч., с. 18—20:

⁸² Նույն տեղում, էջ 10, 19, 20: «Важно и то, что в армянских источниках нет упоминания о том, что армяне были в числе восставших против Дария. Вавилонские источники (только Гр. Капанцян. Историко-лингвистические работы к начальной истории армян. Ереван, 1956, с. 208):

⁸³ Այնպես ինչպես, ասենք, Ֆելլե-ը, Իբեր-ը և ռուս-ը նախապես մասամբ էին միայն ծածկում համապատասխանաբար հին հունական, հին վրացական և արևելալավոնական ցեղերի ամբողջությունն ընդգծող հասկացությունները։

⁸⁴ Նույնն են ինչ «շարայանները» կամ «Շարայի զարմերը»՝ Ստրաբոնից Σαραπαρις (<՝Sara-par) կոչվածները։ Տե՛ս Ս. Գ. Պետրոսյան. Հացազգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը, էջ 192, 196—197, 203:

⁸⁵ Նույնն են, ինչ «գեղամյանները» կամ «Գեղամի զարմերը»՝ Վեդնի, Վեդնիկ կոչվածները։ Տե՛ս Ս. Գ. Պետրոսյան. Նույն տեղում, էջ 199, ծան. 81: Նույնի՝ Մերձսևանյան ցեղերի միությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում, էջ 187—197:

ПУТЬ ОТСТУПЛЕНИЯ АРМИИ ДАДАРШИША

С. Г. ПЕТРОСЯН

(Резюме)

В арменоведческой и востоковедческой литературе до сих пор не уточнен маршрут проникновения персидской армии военачальника Дария I—Дадаршиша в Армению в 521 г. до н. э. Исходя из данных Бехистунской надписи, мы пытаемся доказать, что армия Дадаршиша из Ирана проникла в северо-восточную Армению (впоследствии XVIII сатрапия Ахеменидской державы) тем путем, который вел из северной Атропатены в левобережье Араратской долины. Это дает нам право локализовать места битв восставших армян с войсками Дадаршиша на этом пути: а) *Зузахя*—у нижнего течения реки Арпа, там, где впоследствии стояло селение *Дуданга*; б) *Тигра*—у переправы через Аракс, неподалеку от Джульфы, там, где находился древний город *Тигранаван*; в) *Уяма*—близ *Ямского* горного прохода, между Марандом и Софьяном. В Бехистунской надписи они перечислены именно в таком порядке. А это означает, что армия Дадаршиша отступила из левобережья Араратской долины по пути Норашен—Нахчеван—Джульфа—Маранда—Софиян, т. е. вдоль нынешней железной дороги Ереван—Джульфа—Тебриз. Может быть, тем же путем персидская армия Дадаршиша проникла в глубь Армении. Все это говорит о том, что бассейн среднего течения Аракса (районы Норашена, Нахчевана, Джульфы и Маранда включительно) также входил в состав Армины (Agmina древнеперсидских надписей). Следовательно, в древнейшую Армению действительно входили не только земли арменов, т. е. юго-западная половина Армянского нагорья, но и земли саспейров и, возможно, алародов, т. е. северо-восточная его часть.